

# Արզականի աղբյուրների պահպանություն և

զարգացում



**Երկիր.** Հայաստանի Հանրապետություն

**Մարզ, քաղաք** Կոտայքի մարզ, գ. Արզական

**Պատվիրատու** Համաշխարհային Բանկ, ՀԾԾԴԳ

**Ժամկետները.** օգոստոս – նոյեմբեր 1998թ.

## Ծառայության մոտավոր գինը

54 850 ԱՄՆ դոլար

## Տեխնիկական առաջադրանք

1. Արզականի աղբյուրների և գլխամասային կառուցվածքների հիդրոտերկրաբանական և ինժեներատերկրաբանական ուսումնասիրություններ:
2. Ուսումնասիրությունների արդյունքների, և հետագա նախագծային ընդհանուր լուծումների ներկայացում հաշվետվության տեսքով:
3. Աշխատանքային նախագծի մշակում



## **Ծրագրի և կատարված ծառայության համառոտ նկարագիրը**

- ✓ Արզականի գործող ջրընդունիչ կառուցվածքների տարածքում առկա ստորերկրյա ազատ ջրաղբյուրների հիդրոտերկրաբանական ուսումնասիրում և ջրօգտագործման հատուկ թույլատվության ստացում,
- ✓ Արզականի ստորերկրյա ջրաղբյուրների գործող 9 կապտածների վերակառուցման (ընդհանուր հզորությամբ մոտ 600լ/վրկ) և 7 նոր կապտածների կառուցման (ընդհանուր հզորությամբ մոտ 400լ/վրկ) նախագծերի մշակում,
- ✓ Գործող և նախագծվող կապտածների, ջրատարների և այլ օժանդակ կառույցների տարածքի ինժեներատերկրաբանական ուսումնասիրությունների կատարում
- ✓ Գործող և նախագծվող կապտածների, ջրատարների և այլ օժանդակ կառույցների տարածքի գեոդեզիական հանույթի կատարում TC-1100 մակնիշի էլեկտրոնային տախտմետրական գործիքների միջոցով և արդյունքների մշակում LisCAD ծրագրով (Software)
- ✓ Ø300-1200մմ տրամագծի 6.5կմ ընդհանուր երկարությամբ մայր ջրհավաք և մայր թողարկ խողովակաշարի նախագծում,
- ✓ Նոր քլորակայանի, խառնարանի և ջրաչափական հանգույցի նախագծում,
- ✓ Հրազդան գետի հիդրոլոգիական ռեժիմի ուսումնասիրում,
- ✓ Հրազդան գետի հեղեղաջրերից կապտածները պաշտպանելու համար ավապաշտպան կառույցի (ընդհանուր 3.3կմ երկարությամբ) նախագծում,
- ✓ Սանիտարական պահպանության գոտու մոտ 6 կմ ընդհանուր երկարության մետաղական ցանկապատման նախագծում,
- ✓ Գործող բեռնատար կամուրջի հետազննում և վերականգնման նախագծի մշակում,
- ✓ Ադմինիստրատիվ և օժանդակ շենքերի վերանորոգման նախագծում,
- ✓ 3.5 կմ ընդհանուր երկարությամբ ներտարածքային ճանապարհի վերականգնման նախագծում,
- ✓ Սանիտարական պահպանության գոտու լուսավորության վերականգնման նախագծում:



## Աշխատանքի նպատակն է

Նախագծի իրականացումը թույլ կտա ապահովել Երևան քաղաքին ինքնահոս տրվող ջրաբանակի ավելացում, կապտածների, հետևաբար նաև խմելու ջրի պաշտպանություն աղտոտումից, խմելու ջրի որակի բարելավում գործող համալիրի շահագործման պայմանների բարելավում:

